ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ - 1700

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Սոյն թուականի Յունուարի 17-19-ը Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ Մայր Տաճարին կից Առաջնորդարանի դահլիճում գումարուեց 1700-ամեակի Ուխտագնացութեան Յանձնախմբի վարչական մարմնի անդրանիկ ժողովը: Ժողովին ներկայ էին 1700-ամեակի Գրասենեակի վարիչ-տնօրէն Մեսրոպ Արք. Աշճեանը, Ուխտագնացութեանց Յանձնախմբի ատենապետ Յովնան Արք. Տէրտէրեանը, Միջին Արեւելքի երկրների պատասխանատու Սեպուհ Ծ. Վրդ. Սարգսեանը, ԱՊՀ երկրների պատասխանատու Նաթան Ծ. Վրդ. Յովհաննիսեանը, Հայաստանի պատասխանատու Բագրատ Արդ. Գալստեանը, Եվրոպայի երկրների պատասխանատու Տիար Լեւոն Պաղտասարեանը, Հիւսիսային Ամերիկայի եւ Կանադայի պատասխանատու Տիար Անդրանիկ Պարսամեանը, Աւստրալիայի պատասխանատու Օր. Սաբրինա Բակլան: Ժողովից բացակայում էր Հարաւային Ամերիկայի պատասխանատուն:

Ժողովի նիստերին իրենց մասնակցութիւնը բերեցին նաեւ «Երկիր եւ Մշակոյթ» Միութեան նախագահ Տիար Գեղամ Գեւոնեանը, «Սեն Ժակ» Ընկերակցութեան նախագահ Օր. Ժանին Վարկոլիեն, նոյն Ընկերակցութեան գանձապահ Տիար Բուան, «Ակն» ազգագրական երգչախմբի ղեկավար Տիար Արամ Քերոբեանը:

Ժողովը բացուեց աղօթքով, որից յետոյ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Արեւմտեան Եվրոպայի Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի Առաջնորդ Գիւտ Արք. Նագգաշեանը: Ժողովը շարունակուեց հետեւեալ օրակարգով.

1. Ներածական խօսք - 1700-ամեակի Գրասենեակի վարիչ-տնօրէն Մեսրոպ Արք. Աշճեան,
2. «Ուխտագնացութեան ծրագիրը իր ընդհանուր գծերի մէջ» - Յովնան Արք. Տէրտէրեան,
3. Վարչական մարմնի անդամների առաջարկներ,
4. Վարչական մարմնի անդամների պատասխանատուութիւնների եւ պարտականութիւնների բաշխում,
5. 1997 թ. Փետրուարի 19-23-ը Երեւանում կայանալիք միջթեմական ներկայացուցչական մարմնի ժողովի օրակարգի պատրաստութիւն,
6. Պիւտճէի հաստատում:

Վարչական մարմնի սոյն անդրանիկ ժողովը վերոյիշեալ օրակարգի հիման վրայ կայացրեց հետեւեալ որոշումները.

ա. Հրատարակել ուխտագնացութիւններին նուիրուած մի գրքոյկ-ուղեցոյց՝ հինգ լեզուներով /հայերէն, ռուսերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն/:

բ. Ուխտագնացութեանց ծրագիրը արժեւորելու համար որդեգրել Մշոյ Ս. Կարապետ Ընկերակցութեան ծրագիրը՝ իր կանոնագրով:

գ. Ուխտագնացութիւններն աւելի առարկայական եւ յիշատակելի դարձնելու նպատակով կազմակերպել որոշակի սահմանուած թուով ծառատնկութիւն՝ Երեւանի Նորք թաղամասում եւ Խոր Վիրապում, հաստատել ուխտաւորի խաչքար-պատը, որի վրայ պիտի գրուի նրա անունը:

դ. Ուխտագնացութեան մասնակցել ցանկացողների համար ձեռնարկել յատուկ դասընթացներ:

ե. Ուխտաւորի քայլերգ ստեղծելու համար դիմել Ժագ Ս. Ցակոբեանին:

զ. Ցուցապաստառների համար դիմել Վիգէն Դարբինեանին:

Մեսրոպ եւ Ցովնան սրբազանների զեկոյցներից յետոյ վարչական մարմնի անդամները իրենց յանձնարարուած շրջանների պատասխանատուութիւններից բացի վարչական մարմնի մէջ ստանձնեցին հետեւեալ աշխատանքները.

Նախագահ՝ Մեսրոպ Արք. Աշճեան, ատենապետ՝ Ցովնան Արք. Տէրտէրեան, քարտուղար՝ Բագրատ Աբդ. Գալստեան, գանձապահ՝ Անդրանիկ Պարսամեան, հրատարակչական աշխ. վարիչ՝ Սեպուհ Ծ. Վրդ. Սարգսեան, օգնական՝ Նաթան Ծ. Վրդ. Ցովհաննիսեան, ճանապարհորդական հարցեր՝ Լեւոն Պաղտասարեան, օգնական՝ Օր. Սաբրինա Բակլա:

Որոշուեց նաեւ տարին մէկ անգամ գումարել միջթեմական ներկայացուցչական խորհուրդ, որն իր անդրանիկ ժողովը պիտի գումարի Փետրուարի 19-23-ը Երեւանում: Հաստատուեց նաեւ վերոյիշեալ ժողովի օրակարգը՝ հետեւեալ նիւթերով.

1. Զեկոյց՝ Ցովնան Արք. Տէրտէրեան,
2. Երեք թեմերի զեկոյցներ /Արարատեան, Կոտայքի, Արմաւիրի/ եւ ծրագրերի ներկայացում,
3. Ճամփորդական ծրագիր /Ռումանիա, Ղրիմ, Հայաստան/՝ Լեւոն Պաղտասարեան,
4. Հրատարակչական՝ Սեպուհ Ծ. Վրդ. Սարգսեան,
5. Ս. Կարապետի Ընկերակցութիւն՝ Մեսրոպ Արք. Աշճեան,
7. Խօսք Արտաքին առեւտրի և զբոսաշրջիկության նախարար Գառնիկ Նանագուլեանի կողմից:

Ժողովը պատրաստեց եւ հաստատեց ուխտագնացութեանց պիտճէի նախագիծ:

Շաբաթ երեկոյեան վարչական մարմնի չորս անդամները՝ Ցովնան Արք. Տէրտէրեանը, Նաթան Ծ. Վրդ. Ցովհաննիսեանը, Բագրատ Աբդ. Գալստեանը եւ Անդրանիկ Պարսամեանը, մեկնեցին Ամստերդամ՝

Կիրակի օրը պատարագելու եւ տեղի հայ համայնքի հետ աշխատանքներ տանելու, ուխտագնացութեանց նպատակը, ուղղուածութիւնը, ինչպէս նաեւ կազմակերպչական գործունէութիւն ծաւալելու իմաստով:

Կիրակի, Յունուարի 19-ին, Ամստերդամի հայոց եկեղեցում Ս. Պատարագ մատուցեց Յովնան Արք. Տէրտէրեանը, յընթացս որի քարոզեց եւ բացատրեց ուխտագնացութեան էութիւնը: Յաւարտ Ս. Պատարգի Սրբազան Հայրը տեղի հայ համայնքի վարչականներին եւ երիտասարդութեանը մանրակրկիտ կերպով բացատրեց եւ կարեւորեց ուխտագնացութիւնների անհրաժեշտութիւնը:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ

20.01.97.
ՓԱՐԻԶ